



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆՁՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱՎԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ԱՆԴԱՏԱՎԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

12 հուլիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Դոդոսյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Շովիաննիայանի  
Ա. Պեղրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Միեր Գալսդյանի անհարական դիմումով գործը  
քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐՋԵՅ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Միեր Գալսդյանը 2011թ. հուլիսի 6-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ վարչական դարավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 5-րդ, 6-րդ, 15-րդ, 19-րդ, 22-րդ, 31-րդ եւ 37-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ անհարական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով պարզվեց, որ դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմումում բերված չեն անհրաժեշտ եւ բավարար իրավական փաստարկներ՝ վիճարկվող իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորելու համար։ Վյագես՝ դիմողի պարագաներն ու փաստարկները բացառապես վերաբերում են գործի դարավարական նախապարմու-

թյանը, եւ դիմողը, ըստ Էռլեյան, իր սուբյեկտիվ ընկալմամբ ընդամենը մեկնաբանել է ՀՀ վճռաբեկ դագարանի որոշումը:

Անհարական դիմումի ընդունելիության պարբադիր պայման է սահմանված «Սահմանադրական դագարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով, որում ամրագրված է, որ դիմումը պեսք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՀՀ սահմանադրական դագարանն իր ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արգահայտել «Սահմանադրական դագարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ՝ ամրագրելով, որ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պեսք է հիմնավորված լինի «Սահմանադրական դագարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հարկանիշով:

Սույն անհարական դիմումի ուսումնասիրությունը ցույց է փալիս, որ պահպանված չէ վերը հիշարկված դրույթի իմպերադրիվ պահանջը:

Նարկ է նշել նաեւ, որ դիմողը պարզած չի հիմնավորել նաեւ իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փասփի եւ սահմանադրախրավական վեճի առարկա հանդիսացող դրույթի միջեւ պարճառահետեւանքային կապի անմիջական առկայությունը, ինչն ըստ «Սահմանադրական դագարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դագարանի ՍԴՈ-839 որոշման՝ անհարական դիմումն ակնհայր անհիմն համարելու հիմք է:

Դագարական կազմն արձանագրում է նաեւ, որ դիմոդը, ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ նորմի սահմանադրականությունը, ըստ Էռլեյան, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն, դիմոդը փորձել է դագարական ակփերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականության խնդրին: ՀՀ սահմանադրական դագարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արգահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմոդը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ Էռլեյան բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դագարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դագարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կեզերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

## ՈՐՈՇԵՑ.

Զաղաքացի Մհեր Գալստյանի անհարական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



12 հուլիսի 2011թ.

ՍԴԴԿՈ/1-17